ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մայիսի 12-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց 1987 թ. գիտահետազոտական աշխատանքների արդյունքները և նշեց գիտական որոնումների նոր ուղղությունները վերակառուցման պայմաններում։ Բացման խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Մեր ամբողջ կյանքի վերակառուցման պայմաններում, ասաց նա, մեծ է այն բանի նշանակությունը, թե գիտնականները որքան խոր ու բազմակողմանիորեն կըմբռնեն գիտության դերի ու տեղի կարևորությունը այդ դինամիկ պրոցեսում, որը կոչված է մեր երկիրը բարձրացնելու զարգացման որակապես նոր մակարդակի։ Իսկ դրա համար անհրաժեշտ են ոչ միայն նոր մտածողություն, գիտական նոր մոտեցումներ, այլև հիմնարկների կազմակերպական կառուցվածքի համապատասխանեցում գիտական որոնման ներկայիս առանձնահատկություններին։ Նա հիշեցրեց, որ մշակվել ու գործում է հանրապետության գիտությունների ակադեմիայի մինչև 2000 թ. ընկած ժամանակաշրջանի կոմպլեքսային ծրագիրը։ Գիտական հիմնարկներում կառուցվածքային փոփոխություններ են կատարվում, որոնք կազմակերպական ձևերը կհամապատասխանեցնեն առաջադրված գիտական խնդիրների առանձնահատկություններին։

Ակադեմիկոս Համբարձումյանը անդրադարձավ ժամանակակից տեխնիկական միջոցներով գիտական հիմնարկները հագեցնելու հարցերին։

Վերջում նա կանգ առավ հասարակագետ գիտնականների առջև դրված մի շարք պրոբլեմների ու նոր հարցերի վրա, որոնց անցյալում ուշադրություն չէր նվիրվում և որոնք գիտական հետաքրքրության ոլորտից դուրս էին մնացել անհատի պաշտամունքի տարիներին, լճացման ժամանակաշրջանում, մինչդեռ այսօր երկրի հասարակական կյանքի դեմոկրատացումը և կյանքը հրամայաբար պահանջում են վերադառնալ այդ թեմաներին։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական և գիտակազմակերպական գործունեության 1987 թ. հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Սեդրակյանը։ Նա խոսեց այն նոր խնդիրների մասին, որոնք սովետական գիտության առջև սկզբունքորեն դրել են կյանքի բոլոր բնագավառների դեմոկրատացումը, վերակառուցման պայմաններում սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու անհրաժեշտությունը։ Ելնելով անցյալ տարիների փորձից, նա նշեց, որ դեռևս անբավարար տեմպերով է ընթանում վերակառուցումը, հաղթահարված չեն դանդաղկոտությունը, հնից հրաժարվելու դժկամությունը։

Զեկուցողը իր ելույթում զգալի տեղ հատկացրեց գիտությունների ակադեմիայի աշխատանքներում կատարված դրական տեղաշարժերին, խոսեց կազմակերպական գործունեության վերակառուցման, գիտության ղեկավարման մեջ կատարված ապակենտրոնացման, հրապարակայնության ընդլայնման, ստեղծագործական պրոցեսում գիտական կոլեկտիվների դերի մեծացման, գիտությունների ակադեմիայի հիմնարկների գիտական արդյունքների, նոր ստորաբաժանումների գործունեության մասին։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն։

Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Միքայելյանը խոսեց ֆիզիկայի ինստիտուտի կադրերի մասին։ Հայաստանում ստեղծված էկոլոգիական մի շարք հարցերի անդրադարձավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գարրիելյանը։

Գրականության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանը շեշտեց Խորենացու և Նարեկացու հոբելյանները նշելու, մեր մի շարք մոռացված հեղինակների գործերը վերահրատարակելու անհրաժեշտությունը։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը խոսեց Ղարաբաղի հարցի մասին, ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ հազարավոր սումգայիթցիներ գտնվում են ծանր վիճակում

և նրանց անհրաժեշտ է օգնել։ Նա միաժամանակ նշեց, որ այսօր Սովետական Հայաստանից զգալի արտագաղթ է կատարվում օտար երկրներ։ Զարմանալի է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն և կառավարությունը միջոցներ չեն ձեռնարկում այդ երևույթը կանխելու համար, ասաց նա։

Հանրապետության տնտեսական հարցերի վերաբերյալ ելույթ ունեցան ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Քորանյանը և թղթակից անդամ Վ. Խոջտրեկյանը։

Գիտական հաղորդումներով հանդես եկան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Յու. Ալեքսանյանը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ջահուկյանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիկոսներ Բ. Առաբելյանի, Ս. Վարդանյանի և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Մարտիրոսյանի զեկուցումների առթիվ հաստատվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բաժանմունքի կանոնադրությունը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրությունը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընտրությունների կանոնադրությունը։

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևների հանձնում։ Մեծարման գրի արժանացան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ն. Հարությունյանը և Վ. Ղազարյանը։

Հայ գիտնականների մի խումբ արժանացավ Վաստակագրի և Գովեստագրի։

Է. Գ. ԱՎԱՎԵՐԴՅԱՆ